«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա (9/16)
ՀԵՂԻՆԱԿ	ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՎԱՐԴ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	հաստատություն №4 միջնակարգ դպրոց

Оглавление

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1 4
Մասնագիտական կողմնորոշմանը ներկայացվող պահանջները 4
Նպատակը 5
Գլուխ 2 6
Սովորողների հիմնարար հմտությունները 6
Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված 7
ծրագրային հիմնադրույթներ 7
Գլուխ 3 9
Ինչ է մասնագիտական կողմնորոշումը 9
Մասնագիտական ինքնորոշում 9
Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ծրագրային հիմնադրույթներ 10
Հիմնական հասկացությունների սահմանումները 11
Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակը 12
Գլուխ 4 14
«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները 14
5-7-րդ դասարաններում 14
Դասավանդման կիրառելի մեթոդները 21
Գլուխ 5 22
Հետազոտական աշխատանք 22
Եզրակացություն 22
Օգտագործված գրականության ցանկ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում նպատակ ունի աշակերտներին զինելու արդի տեխնիկա-տեխնոլոգիական գիտելիքներով՝ ձևավորելով ժամանակակից կյանքի մասին անհրաժեշտ գիտելիքներով, հասկացություններով և ունակություններով, առանց որոնց անհնար է պատկերացնել անձի ձևավորումը, ազգային ավանդույթների պահպանումը և, ի վերջո, երկրի առաջընթացին և զարգացմանը նպաստելը:

«Տեխնոլոգիա» առարկան նպաստում է աշակերտներին նախապատրաստել ժամանակակից աշխատանքային կյանքի պահանջներին, նրանց մոտ ձևավորելով ստեղծագործական միտք, լինել նախաձեռնող և ակտիվ անձնավորություն:

Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշխատանքներ են իրականացվում կրթա-դաստիարակչական գործընթացի ժամանակ՝ որպես երկարատև և շարունակական գործընթաց, նպատակ ունենալով հասնել նրան, որ աշակերտները կատարեն գիտակցված մասնագիտական ընտրություն:

Ներկայումս աշխատաշուկայում մոտավորապես 6000 մասնագիտություն է հաշվառվում՝ կապված նորագույն տեխնոլոգիաների հետ: Կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտություններին և զբաղմունքներին նոր պահանջներ են ներկայացվում, ծնվում են նոր մասնագիտություններ: Պետք է կարևորել այդ մասնագիտությունների մասին տեղեկատվության տրամադրումը աշակերտներին և ծնողներին:

Մասնագիտական ընտրությունը բարդ և պատասխանատու քայլ է մարդու կյանքում, ուստի դրան պետք է աշակերտներին նախապատրաստել հանրակրթական դպրոցում՝ հաշվի առնելով անհատի առանձնահատկությունները և աշխատաշուկայի սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչպես տվյալ պահին, այնպես էլ ապագայում կանխատեսվող:

Մասնագիտության ընտրությունն աշակերտի համար դժվար խնդիր է այն առումով, որ նա հստակ չի պատկերացնում, թե ինչ է իրեն սպասվում, քանի որ այդ տարիքում սովորողը հաշվի չի առնում իր անձնային յուրահատկությունները և բնավորության գծերը:

Երբ աշակերտն արդեն որոշակի նախասիրություն ունի այս կամ այն մասնագիտության նկատմամբ, անհրաժեշտ է նրան տալ տեղեկատվություն տվյալ ոլորտի բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների վերաբերյալ: Լիարժեք տեղեկատվությունը սովորողներին կօգնի գիտակցված ընտրություն կատարելու՝ հաշվի առնելով սեփական գիտելիքները, հնարավորություններն ու

կարողությունները, դրանով իսկ ստեղծելով կայուն հիմքեր հետագայում մրցունակ և պահանջված մասնագետ լինելու:

Սակայն պետք չէ ծնողներն ու մանկավարժները «ճնշեն» աշակերտին՝ կտրելով նրա երազանքի թևերը: Թող ինքը ընտրի իր մասնագիտությունը, թող փորձի, նույնիսկ սխալվի, բայց այն թող իր ընտրությունը լինի, որպեսզի հետագայում նա այդ ընտրած աշխատանքից հաճույք ստանա, ցանկանա գնալ դրան՝ ինչպես տոն:

Անձի մասնագիտական ուղղվածության ուղղությամբ տարվող աշխատանքների հաջորդ կարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատության ընտրությունն է: Այդ նպատակով պետք է աշակերտին որոշակի տեղեկատվություն տրվի, որի գործուն մասնակիցները կդառնան ուսուցիչները, հոգեբանները, ծնողները, գործատուները: Մասնագիտական կողմնորոշմանը նպաստող և ուղղորդող ազդեցության են կոչված ինչպես հանրակրթական ուսումնական հաստատությունները, այպես էլ մասնագիտական կողմնորոշման կենտրոնները: Դպրոցների մանկավարժները մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ղեկավարմամբ իրականացնում են աշխատանքներ աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ դիտարկումների արդյունքների հիման վրա կազմելով անհատական բնութագրեր և տալով համապատասխան խորհրդատվություն: Նմանատիպ աշխատանքները հնարավորություն են ընձեռնում ճիշտ ընտրել մասնագիտությունը, ըստ ստեղծագործական ունակությունների, ունեցած գիտելիքների և կարողությունների: Դրանք զերծ կպահեն աշակերտին հետագա հիասթափություններից, հնարավորություն տալով վստահ լինել ապագայի նկատմամբ:

Գլուխ 1
Մասնագիտական կողմնորոշմանը ներկայացվող պահանջները

Բացի մասնագիտական կողմնորոշման հանդեպ հետաքրքրության հարաճուն ռիթմից 21-րդ դարում արդեն նկատելիորեն փոխվելու են մասնագիտություններին և աշխատանքներին ներկայացվող պահանջները: Այդ պահանջներից ելնելով արդի հանրակրթական դպրոցները պետք է հասարակական-պետական պատվերներին համապատասխան քաղաքացի ձևավորեն, որն ունենա ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան գիտելիքներ, 21-րդ դարում ապրելու և գործելու հմտություններ: Այսօր աշխատողներից պահանջում են համակարգչային գիտելիքներ, օտար լեզուների իմացություն, թիմային աշխատանքի և որոշումներ կայացնելու հմտություններ, հիմնահարցեր և կոնֆլիկտներ լուծելու կարողություններ, տոկունություն, հետևողականություն:

Աշակերտների հետ տարվող աշխատանքներում պետք է նրանց տեղեկացնել, որ ժամանակակից գրասենյակներում հատկապես արժևորվում են այն աշխատողները, ովքեր ունեն հետևյալ հմտությունները.

1. Կարողանում են համոզել գործընկերներին ընդունելու իրենց գաղափարները:
2. Կարողանում են թիմի հետ աշխատել որևէ ծրագիր ավարտին հասցնելու ուղղությամբ:
3. Կարողանում են գրավոր շարադրել իրենց մտքերն այնպես, որ մարդկանց մոտ առաջանում է գործելու մղում:
4. Կարողանում են արդյունավետ հաղորդակցվել ղեկավարների և հաճախորդների հետ:
5. Կարողանում են համագործակցել տարբեր խմբերի պատկանող մարդկանց հետ:

Ժամանակակից աշխարհում նույնիսկ միևնույն աշխատանքը երկար ժամանակ կատարող մարդիկ պարբերաբար կարիք ունեն նորացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները: Մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող աշխատանքների արդյունքում աշակերտ պետք է հասկանա, որ աշխատանքում և մասնագիտական գործունեության ոլորտում հաջողությունների հասնելու, արդյունավետ աշխատանք իրականացնելու, որպես անձ և որպես մասնագետ զարգանալու համար անհրաժեշտ է անսահման հետաքրքրվածություն դրսևորել սեփական աշխատանքի և մասնագիտության հանդեպ՝ հստակ հաշվի առնելով սեփական հետաքրքրությունները, ընդունակությունները և կարողությունները: Ի վերջո, մասնագիտության ճիշտ ընտրությամբ է պայմանավորված անձի ապագա կյանքի որակը, բարեկեցությունը, կյանքի հետագա ընթացքը:

Նպատակը

Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակն է աշակերտների մոտ զարգացնել դիրքորոշում, որ ելնելով իրենց ունակություններից և ընձեռնված հնարավորություններից, կարողանան մասնագիտական ճիշտ ընտրություն կատարել: Այն գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռնած հնարավորությունների, մասնագիտական անձնային որակների և հակումների վերաբերյալ, որը աշակերտին հնարավորություն կընձեռնի կայացնել գիտակցված և արդյուավետ որոշում:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացվող բազմաբնույթ աշխատանքների արդյունքում սովորողը կկարողանա տարբերակել իր նախընտրելի կամ գերադասելի ոճը, որն էլ զարգացնելով կամ կատարելագործելով, ամուր հիմք կստեղծի իր ապագա ընտրած մասնագիտության համար: Մասնագետների կարծիքով այդ ոճերն են և դրանց առանձնահատկությունները.

- Գործունյա մարդիկ լավա լավագույնս սովորում են նոր փորձություններից, մարտահրավերներից և դրանցից բխող հնարավորություններից: Նրանք սիրում են խաղեր, թիմային աշխատանք, առաջադրանքներով ու դերախաղերով վարժություններ: Նրանք դեմ են միապաղաղ ու առանձին ուսուցմանը, ինչպիսիք են ընթերցանությունը, ինքնուրույն հետազոտությունը և առաջադրանքները, որոնք պահանջում են խորամուխ լինել մանրամասների մեջ:
- Մտածողները առավել արդյունավետ սովորում են, երբ կարող են մտածել, հետազոտել՝ վերլուծելով տեղի ունեցածն ու իրենց սովորածը: Սակայն նրանք խուսափում են ուշադրության կենտրոնում լինելուց, երբ աշխատանքները զերծ չեն թերի տվյալներից, հապճեպ մտահանգումներ կան, ինչպես նաև աշխատանքը մակերեսային է կատարված:
- Տեսաբանները գիտակցում են, որ այն ինչ սովորում են, հանդիսանում է որևէ համակարգի, մոդելի, հայեցակարգի կամ տեսության մաս: Նրանք կողմնակից են հստակ նպատակ, հետաքրքիր գաղափարներ ու հայեցակարգեր ունեցող համակարգված իրավիճակների: Նրանք հաճախ դեմ են զգայական իրավիճակների մասնակցելուն:
- Օգտապաշտները լավագույնս սովորում են այն վարժություններից, որոնց թեման ուղղակիորեն առընչվում է որևէ իրական հիմնախնդրի և որոնց ընթացքում կարողանում են կիրառել իրենց սովորածը: Նրանք դեմ են իրականությունից հեռու ուսուցմանը, «տեսության և ընդհանուր սկզբունքների» ամբողջ փաթեթին:

Աշակերտի գերադասելի ոճի իմացությունը հնարավորություն կտա նրան ուղղորդել այս կամ այն մասնագիտությանը նախապատվություն տալուն՝ կարևորելով երեխաների ֆիզիկական առողջությունը, սոցիալ-էմոցիոնալ բարեկեցությունը, զարգացնելու սովորելու արդի մոտեցումներ, ինչպիսիք են՝ համագործակցությունը, քննադատական մտածողությունը, խնդիրների լուծումը: Նման մոտեցմամբ հնարավոր կլինի ապահովել մարդ-քաղաքացի-մասնագետ եռամիասնությունը:

Գլուխ 2
Սովորողների հիմնարար հմտությունները

Արդի կրթության ոլորտում անհրաժեշտ է կարևորել ոչ միայն ակադեմիական ուսուցումը, այլ մարդկային որակների զարգացումը: Որպես այդ հիմնահարցի լուծման միջոցներ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Թունի Վագները առանձնացնում է սովորողների հետևյալ հիմնարար հմտությունները.

- Հետաքրքրասիրություն և երևակայություն,
- Քննադատական մտածողություն և խնդիրների լուծում,
- Նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- Տեղեկատվության որոնում և վերլուծություն,
- Համագործակցություն ցանցերի միջոցով և առաջնորդություն ազդեցության միջոցով,
- Գրավոր և բանավոր արդյունավետ հաղորդակցություն,
- Ճկունություն և հարմարվողականություն:

Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ծրագրային հիմնադրույթներ

Տարրական դպրոցում տարբեր առարկաների դասապրոցեսում աշակերտների մոտ ձևավորվում են հետևյալ անձնային որակները.

- Ինքնակազմակերպման, ժամանակն արդյունավետ տնօրինելու հմտություն,
- Ինքնաճանաչման իրատեսական ինքնագնահատման ինքնադրսևորման հմտություններ,
- Համագործակցություն, հանդուրժողականություն,
- Ստեղծագործական մտածողություն,
- Հաղորդակցման հմտություններ:

Միջին դպրոցում շարունակվում է տարրական սովորողների ձեռք բերած անձնային որակների ամրապնդումն ու զարգացումը, այս փուլում ավելի խորացնելով դրանք: Միչին դպրոցի սովորողի մոտ կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս մանկավարժները պետք է խթանեն հետևյալ հմտությունները և կարողությունները.

- Համագործակցությամբ աշխատելու կարողություն, որը ներառում է մասնակցելու պատրաստակամություն, ընդհանուր գործի հանդեպ պատասխանատվություն,
- Ինքնուրույնություն, նախաձեռնության դրսևորում,
- Ընկերների հանդեպ հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունք,
- Կոնֆլիկտային իրավիճակները հարթելու կարողություն,
- Մտածելու և խնդիրները լուծելու, որոշումներ կայացնելու կարողություն:

Ավագ դպրոցում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներում կարևորվում է արդեն մասնագիտությունների հետ ծանոթացումը, դրանց գնահատելը, վերլուծելը, թե այս կամ այն մասնագիտությունների համար ինչ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ են անհրաժեշտ ունենալ: Ավագ դպրոցի աշակերտների մոտ կարևորվում է խթանել որոշակի հմտություններ և կարողություններ.

- Ինքնակազմակերպման կարողություն - աշխատանքի սեփական ոճի, աշխատանքի նկատմամբ դրական դիրքորոշմամբ և ինքնավստահությամբ, ձգտելով հարստացնել ունեցած գիտելիքները, լինել ինքնավստահ և նպատակասլաց,
- Տրված հրահանգներն ընկալելու, բացատրություններ ունկնդրելու և նախաձեռնություն հանդես բերելու ունակություն,
- Տեխնոլոգիական հմտությունների, աշխատանքային հնարքների և գիտելիքների տիրապետում,
- Հետագա ծրագրեր պլանավորելու կարողություն որոնք պետք է լինեն հստակ և իրատեսական:

Վերոհիշյալ բոլոր հմտությունների ձևավորումը անհրաժեշտ է իրականացնել ուսուցման ողջ գործընթացի ժամանակ՝ նորագույն մեթոդների կիրառմամբ և որոշակի մշակված ծրագրերով:

Այդ խնդիրների իրականացմանը պետք է ներգրավվեն բոլոր առարկների ուսուցիչները՝ սովորողներին տալով ոչ միայն ակադեմիական գիտելիքներ այլ տեղեկատվություն տրամադրեն իրենց դասավանդվող առարկայի և դրանից բխող մասնագիտությունների կապի վերաբերյալ, ձևավորելով որոշակի գործնական հմտություններ:

Դասավադող մանկավարժները անհրաժեշտ է սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ներգրավեն ծնողներին, ծրագրելով հետևյալ աշխատանքները.

- Մասնագիտական կողմնորոշման խնդրի կարևորության լուսաբանում,
- Մանկավարժի կողմից սովորողների նախասիրությունների, կարողությունների, հակումների մասին դիտարկումների արդյունքների պարբերական իրազեկման տրամադրում՝ ծնողների ակտիվ աջակցությունն ապահովելու նպատակով:

Մասնագիտական կողմնորոշման արդյունավետ իրականացման արդյունքում ոչ միայն կշահեն սովորողները, այլ նաև հասարակությունը:

Գլուխ 3
Ինչ է մասնագիտական կողմնորոշումը

Ցանակացած մարդ իր տարիքային և սոցիալական զարգացման ինչ-որ մի փուլում անխուսափելիորեն մտածում է «Ի՞նչ մասնագիտություն ընտրել»: Հարցի լուծումը կարևոր է ոչ միայն իր, այլ նաև հասարակության համար:

Մասնագիտական կողմնորոշումը մանկավարժական աշխատանքի բնականոն շարունակությունն է և կարելի է դիտարկել որպես դրա տրամաբանական ավարտ: Ուսուցման գործընթացում աշակերտին խորհրդատվության տրամադրումը նպատակաուղղված է նրան վստահություն ներշնչել ապագայի նկատմամբ: Անտիկ հույն փիլիսոփա Պլատոնը գրեթե 2.5 հազարամյակ առաջ գրել է. «Ամեն առանձին անհատ պետք է զբաղվի այնպիսի մի բանով, ինչը պետք է պետությանը, և միևնույն ժամանակ նրանով, ինչին նա իր ամբողջ էությամբ ամենաշատն է համապատասխանում», այսինքն նա ընդգծել է այն, որ աշխատանքի և հասարակության զարգացման գործում անխուսափելի է անհատի գործունեության դերերի տարանջատումը:

Մասնագիտական ինքնորոշում

Սովորողը ունի հետաքրքրություններ որոշակի մասնագիտությունների նկատմամբ: Հետաքրքրությունները կարող են բացահայտվել հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդներով:

Կողմնորոշվելով անձն ընտրում է այն, ինչն առավել մոտ է իր կարիքներին: Հասկանալ, թե ինչն է այս կամ ինքնորոշման դրդապատճառը, նշանակում է հասկանալ անձի հակումները, արժեքները, հստակեցնել նրա հնարավորությունների մակարդակը, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել անձին՝ հասնելու իր նպատակին:

Դրդապատճառը հանգեցնում է գործողության, իսկ նպատակն ուղղորդում է այն:

Այսինքն՝ սեփական կարիքներն գիտակցվում են սովորողի կողմից, առանձնացվում են նախընտրությունները, նոր հետաքրքրություններ են առաջանում, որոնք հետագայում վեր են ածվում հակումների, ձևավորվում են արժեքներ, դրդապատճառներ, իսկ արդյունքում հստակեցվում են նպատակները, ուսումնասիրվում են անձի հնարավորությունները, որոնք կամ կնպաստեն կամ կխոչընդոտեն նրա նպատակների իրականացմանը: Այս ամբողջից հետո տեղի է ունենում անձի մասնագիտական ինքնորոշում:

Կատարված մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունքում անձը կարևորում է հետևյալ արժեքները.

- Ինքնահաստատում հասարակության մեջ, սոցիալական շրջապատում,

- Հեղինակություն աշխատավայրում,
- Ճանաչելիություն ծանոթների, ընկերների կողմից,
- Ինքնադրսևորում, ինքնակատարելագործում-հետաքրքիր աշխատանք,
- Իմացության, կարողության և ունակության կիրառում,
- Աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցում,
- Լավ վարձատրություն, նյութական, պրակտիկ արժեքներ,
- Պաշտոն, կարիերայի առաջխաղացման հնարավորություն, անձի բավարարվածություն:

Այսպիսով անձի վերլուծությունը մասնագետ-խորհրդատուի կոմղից հնարավորություն է տալիս տրամադրելու առավել հասցեական և նպատակային խորհրդատվություն՝ հիմնված դիտարկումների, թեստավորման, հարցազրույցի կամ զրույցի մեթոդների կիրառման արդյունքների վրա:

Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ծրագրային հիմնադրույթներ

Մասնագիտական կողմնորոշման նպատակները հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր տարիքային խմբում տարբեր են: Տարրական դպրոցում՝ 1-4-րդ դասարաններ – պատկերացումներ են ձևավորվում տարբեր մասնագիտությունների մասին, մարդու կյանքում աշխատանքի դերերի մասին, ցուցադրելով տարբեր գործողություններ / տեսաֆիլմեր, հաղորդումներ /: Հիմնական դպրոցի առաջին փուլ՝ 5-7-րդ դասարաններ – մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության հետ կապված հետաքրքրությունների և կարողությունների զարգացում: Հիմնական դպրոցի երկրորդ փուլ՝ 8-9-րդ դասարաններ – մասնագիտական ընտրության հետ կապված մոտիվացիայի ձևավորում՝ հիմնական հակումներն ու կարողությունները ինքնուրույն վերլուծելու պատրաստվածության միջոցով: Ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ – ինքնորոշման իմաստային և արժեքային կողմերի ձևավորում, սովորողների մասնագիտական պլանավորման և նախընտրությունների պարզում, կարողությունների և ընդունակությունների զարգացում՝ մասնագիտական հոսքերում առանձին առարկաների առավել խորն ուսումնասիրման միջոցով:

Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված գործընթացներում կարևորվում են նաև ծնողների հետ տարվող աշխատանքները: Դրանք ավելի կարևոր են հատկապես ավագ դասարաններում: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ բարձր դասարանների աշակերտների մասնագիտական ինքնորոշման հետ կապված խնդիրներ են առաջանում անձի անհատականության ոչ լիարժեք ձևավորման դեպքում, ինչի հիմքում ընտանեկան դաստիարակությունն է: Սովորողի մասնագիտական ինքնորոշման զարգացման խոչընդոտ է հանդիսանում ծնողների կողմից որոշում կայացնելը, որը բացասաբար է անդրադառնում աշակերտի վարքի վրա, նրանց մոտ

առաջացնելով անհանդուրժողականություն, երբեմն էլ՝ մերժում ցանկացած ինքնորոշման քայլից: Մանկավարժները պետք է կարևորեն ծնողների հետ տարվող աշխատանքները, նրանց հետ անցկանցելով զրույցներ, քննարկումներ, աշխատաշուկայի կանխատեսվող զարգացումներին, տարբեր մասնագիտությունների նկարագրություններին, մասնագիտական կրթության համակարգին ծանոթացում, իրազեկում կրթություն և ուսուցում իրականացնող հաստատություններում ուսումնառության հնարավորությունների և պայմանների մասին:

Հիմնական հասկացությունների սահմանումները

Մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռնած հնարավորությունների, մասնագիտական անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռնելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում:

Կարիերան կյանքի ընթացքում մարդու ստանձնած աշխատանքային դերերի հաջորդականությունն ու բազմազանությունն է: Առավել լայն իմաստով այն ընդգրկում է կյանքի դերերը, ազատ ժամանցի գործունեությունը, ուսումնառությունը և աշխատանքը:

Կարիերայի ուղղորդումը համակարգված գործառույթ է, որի նպատակն է ուղղորդման սուբյեկտին օգնել շարունակական ինքնազարգացման և ինքնակատարելագործման միջոցով բարձրացնել մրցունակությունը աշխատաշուկայում և ունենալ համակարգված շարունակական առաջընթաց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում:

Մասնագիտական ինքնորոշման էությունը կայանում է ընտրված մասնագիտության, զբաղմունքի, աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրության և իմաստի փնտրման և այն գտնելու մեջ:

Մասնագիտական ինքնագիտակցությունը մարդու ինքնագիտակցությունն է, որի համար որոշակի աշխատանքային գործունեությունը հանդիսանում է միջոց՝ որպես կայացած անձ սեփական արժանապատվությունը հաստատելու համար:

Մասնագիտությունը (լատիներեն professio նշանակում է հայտարարում եմ իմ գործը) մարդու աշխատանքային գործունեության տեսակ է, որը պահանջում է որոշակի պատրաստվածություն և հանդիսանում է մարդու գոյատևման աղբյուր: Մասնագիտությունները տարանջատվում են կատարվող աշխատանքների բնույթով և պարունակությամբ, ինչպես նաև՝ աշխատանքային գործիքների կիրառմամբ:

Մասնագիտացումը (լատիներեն specialis նշանակում է հատուկ, յուրահատուկ) հատուկ պատրաստվածության և աշխատանքային փորձի վրա հիմնված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որն անհրաժեշտ է կոնկրետ գործունեության տեսակի համար այս կամ այն մասնագիտության շրջանակներում:

Զբաղմունքը աշխատանք է, որով անձն զբաղվում է տվյալ պահին, և որը նրա համար հանդիսանում է եկամուտի հիմնական աղբյուր: Ի դեպ, զբաղմունքը կարող է համընկնել մասնագիտության հետ:

Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակը

Մասնագիտական կողմնորոշման իրականացման սկզբունքները պայմանավորված են անձի կարիքներով: Այդ կարիքներից է բխում մասնագիտական կողմնորոշման իրականացման կոնկրետ մեթոդի կիրառումը: Ամեն մի մեթոդ ունի աշխատանքի իր սկզբունքները: Կիրառվող հիմնական մեթոդներն են.

1. Մասնագիտական իրազեկում. Այն ներառում է զբաղմունքների և մասնագիտությունների աշխարհի, աշխատաշուկայի, կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների և պայմանների մասին տեղեկատվության տարածումը:
2. Մասնագիտական հետազոտումը մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցելու նպատակով անձի ուսումնասիրումն է: Այդ գործընթացում հետազոտվում են անձի բնավորության առանձնահատկությունները, կարիքները, արժեքային կողմորոշիչները, հետաքրքրությունները, ընդունակությունները, մասնագիտական նախնական ուղղվածությունը:
3. Մասնագիտական խորհրդատվությունը նպատակ ունի բացահայտել անձի անհատական առանձնահատկությունները և այս կամ այն զբաղմունքի մասնագիտության պահանջների համապատասխանությունը: Խորհրդատվություն կարող է անցկացվել խմբային կամ անհատական ձևով՝ եթե նախապատրաստական կամ հիմնական փուլերն են, սակայն ավարտական փուլում այն պետք է լինի անհատական զրույցի ձևով, հնարավոր է՝ ծնողների մասնակցությամբ: Մասնագիտական խորհրդատվությունը կարող է ունենալ տեղեկատվական և հոգեբանամանկավարժական բնույթ: Արդյունքում դպրոցականը պետք է սպառիչ պատասխաններ ստանա իրեն հետաքրքրող մասնագիտության, այդ մասնագիտությամբ կրթություն և ուսուցում ստանալու վերաբերյալ: Որպես այս մեթոդի արդյունավետության ապահովում կարիք կլինի աշխատանքը շարունակել այլ մեթոդներով՝ այցելություններ տարբեր աշխատատեղեր, հանդիպումներ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների հետ, մասնակցություն մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպված

միջոցառումների, հանդիպումների և այլ: Այս փուլում արդեն ընդհանրացնելով մասնագիտական նախնական ախտորոշման և տեղեկատվության արդյունքների հիման վրա ստեղծված պատկերացումները, ամեն մի կոնկրետ անձի պետք է տրվի մասնագիտական խորհրդատվական եզրակացություն:

4. Մասնագիտական ընտրության մեթոդի նպատակն է բացահայտել մարդու հարմարվողականությունը կոնկրետ աշխատանքին, զբաղմունքին: Այս աշխատանքները որպես կանոն, իրականացվում են դպրոցից դուրս հատուկ լաբորատորիաներում կամ գործատուի մոտ՝ ձեռնարկություններում, որտեղ ըստ մասնագիտությունների, ստեղծված են հատուկ հարմարություններ:
5. Պետք է տարբերակել մասնագիտության ընտրությունը մասնագիտությունների ընտրությունից: Թվում է, թե նույնական են, սակայն մեթոդիկայով դրանք իրարից շատ են տարբերվում. Մասնագիտության ընտրության դեպքում ընտրում են տվյալ մասնագիտությանն առավել համապատասխանող անձին, իսկ մասնագիտությունների ընտրության ժամանակ խոսքը գնում է անհատի անձնային առանձնահատկություններին համապատասխան մասնագիտության ընտրության մասին, այսինքն՝ մեթոդը ենթադրում է անձից անցում դեպի մասնագիտությունը:
6. Սոցիալ-մասնագիտական հարմարեցման փուլում ակտիվ գործընթացների միջոցով իրականացվում է երիտասարդի հարմարեցում նոր սոցիալական միջավայրին, աշխատանքի պայմաններին և կոնկրետ մասնագիտությանը: Մասնագիտական հարմարեցման փուլի հաջողությունը մասնագիտության ճիշտ ընտրության, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է:
7. Մասնագիտական դաստիարակության նպատակն է մարդկանց մոտ ձևավորել պատասխանատվության, պատրաստվածության զգացում, ինքնուրույն որոշում կայացնելու, ընտրություն անելու կարողություններ:

Գլուխ 4

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները 5-7-րդ դասարաններում

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտի նպատակներն են.

- սովորողների պոլիտեխնիկական զարգացումը,
- ստեղծագործական և գեղագիտական զարգացումը,
- ինքնաճանաչման հնարավորության ապահովումը,
- մասնագիտությունների ուսումնասիրումը և կողմնորոշումը:

«Տեխնոլոգիա» առարկայի խնդիրներն են

- տեխնոլոգիական և աշխատանքային կուլտուրայի ձևավորում, աշխատասիրության դաստիարակում,
- նախագծային, կոնստրուկտորական և դեկորատիվ-կիրառական գործունեության ձևավորում,
- մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորում:

Առարկայի ծրագրով նախատեսված «Մասնագիտական կողմնորոշում» բաժնի նյութերի ուսուցումը աշակերտների մոտ ձևավորում է տարրական գիտելիքներ և հմտություններ, որոնք նպատակաուղղվում են նրանց ընտրելու այս կամ այն մասնագիտությունը կամ արհեստը:

Դպրոցում մասնագիտական կողմնորոշման նպատակով աշխատանքներն իրականացվում են ինչպես տեխնոլոգիա «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման, այնպես էլ կրթադաստիարակչական ողջ գործընթացի ժամանակ:

Մասնագիտական կողմնորոշում ասելով մենք հասկանում ենք.

- Սովորողների կողմից սեփական ունակությունների, հակումների, իրատեսական գնահատման կարողությունների ձևավորում:
- Տարբեր մասնագիտություններին (մասնագետների գործնական և անձնային որակներին) ներկայացվող ընդհանրական պահանջների իմացություն:
- Առանձին մասնագիտությունների կամ աշխատանքային գործունեության բնագավառների առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների զարգացում և իրազեկության ապահովում դպրոցական գիտելիքների սահմաններում, սովորողներին մատչելի չափով և միջոցներով:

- Սովորողների շրջանում դպրոցական որակյալ կրթության կարևորության ամրապնդում, շեշտադրում՝ աշխատանքային շուկայում իրենց գործողությունների ազատությունն ու ճկունությունն ապահովելու համար:

Մասնագիտական կողմնորոշում թեմային հիմնական դպրոցի 7-րդ դասարանում ծրագրով նախատեսվում է 2 ժամ:

Դասի թեման «Մասնագիտական ընտրության կանոնները»

Նպատակը – Աշակերտներին տեղեկություններ հաղորդել ժամանակակից մասնագիտությունների մասին, օգնել կատարելու ճիշտ ընտրություն:

Խնդիրները – Խթանել աշակերտների ինքնաճանաչման, իրենց ուժեղ և թույլ կողմերի, կարողությունների (ընդունակությունների), ցանկությունների և հետաքրքրությունների մասին իմացությունների զարգացումը:

Ընթացքը – ԽԻԿ մեթոդի կիրառման միջոցով պարզել աշակերտների տեղեկացվածությունը մասնագիտությունների վերաբերյալ: Առաջարկել սովորողներին գրի առնեն նախընտրած մասնագիտությունների ցանկը: Նախապես պատրաստված «Մասնագիտության ընտրության բանաձև» Վենի դիագրամի (գծապատկերի) լրացման պահանջների բացատրությունից հետո առաջարկել լրացնել այն՝ յուրաքանչյուր խմբի տրամադրելով համապատասխան բացատրություններով տեքստը:



Բաշխված քարտեր

1. Քո հետաքրքրությունները և հակումները - «Ուզում եմ»

   Այդ այն ամենն է, որ դու կատարում էս դպրոցում և դասերից դուրս՝ հետաքրքրությամբ և սեփական նախաձեռնությամբ:Եթե քո ընտրած գործից դու հաճույք էս ստանում, դու սիրով և արդյունավետ կաշխատես՝ դառնալով արհեստավարժ: Կբարձրանան քո հնարավորությունները՝ գտնելու բարձր վարձատրվող և հարգի մասնագիտություն:

2. Հնարավորություն և ունակություն - «Կարող եմ»

   Այդ քո ուժերին համապատասխան գործունեություն է, քո գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու առողջական վիճակը հնարավորություն են ընձեռնում դրանով զբաղվելու: Կան գործեր, որոնցում դու չես կարող հասնել բարձր արդյունքների, իսկ կան գործեր, որոնք դու կատարում ես հեշտությամբ, հաճույքով՝ չզգալով դժվարություն: Ընտրությունը պետք է դրա օգտին կատարվի:

3. Պահանջված է աշխատաշուկայում - «Պետք է»

   Անհրաժեշտ է հաշվի առնել ռեալ իրավիճակը, ընտրած մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունը: «Պետք է» - ն հաճախ չի համընկնում «Ուզում եմ» մտահղացման հետ: Քայլ կատարելով «Պետք է» - ի կողմը, անհրաժեշտ է հիշել՝ գործազրկությունը մասնագիտական գործունեության ոչ լավագույն սկիզբն է:

Թեմա «Մասնագիտական աշխատանքի տեսակների դասակարգում»

Նպատակը – Աշակերտների մոտ զարգացնել մասնագիտությունների վերաբերյալ տեղեկացվածությունը, կատարելագործել ինքնագնահատականի օբյեկտիվությունը, բարձրացնել ինքնավստահությունը՝ կայացնելու ինքնուրույն որոշումներ:

Խնդիրները – Բացահայտել աշակերտների գիտելիքները մասնագիտությունների վերաբերյալ: Վերլուծել նրանց պատկերացումները մասնագիտությունների մասին, դրանց ներկայացվող

արդի պահանջների վերաբերյալ հստակ տեղեկատվություն տալ: Հաստատել աշակերտների արտահայտած կարծիքները՝ ընդգրկելով բոլորին:

Ընթացքը – էվրիստիկ մեթոդի օգտագործմամբ ուսումնասիրել աշակերտների գիտելիքները մասնագիտությունների, դրանք ստանալու վերաբերյալ: Ներկայացնել մասնագիտությունների հինգ խմբերը՝ ելնելով աշխատանքի տեսակից, տալով բացատրություններ.

1. Մարդ – կենդանի բնություն (կենսաբան, երկրաբան, բնապահպան, բանջարաբուծ, կենդանաբուծ և այլն):
2. Մարդ – տեխնիկա (վարորդ, մոնտաժող, փականագործ, ճարտարագետ, կոնստրուկտոր, խառատ և այլն):
3. Մարդ – մարդ (բժիշկ, ուսուցիչ, իրավաբան, ոստիկան, քննիչ, տեսուչ և այլն):
4. Մարդ – նշանային համակարգ (հաշվապահ, ծրագրավորող, գծագրող, տնտեսագետ, թարգմանիչ, հարկային տեսուչ և այլն):
5. Մարդ – գեղարվեստական կերպար (նկարիչ, դերասան, ձևավորող, լրագրող, ոսկերիչ, դիզայներ, ճարտարապետ և այլն):

Դասի ավարտին կիրառել «Փոխներգործուն» նշանների համակարգը

- √ գիտեմ
- - իմ իմացածին հակասում է
- + նոր տեղեկություն է
- ? անհասկանալի է, շփոթեցնող
- ! հետաքրքիր է, կարելի է քննարկել

Դասն ամփոփել՝ քննարկելով աշակերտների գրառումները, հստակ և հասկանալի բացատրել անհասկանալի և շփոթեցնող նկատառումները:

«Աշխատանք ենք ընտրում» վարժությունը 7 – րդ դասարանում անց է կացվում 45 րոպե տևողությամբ:

Նպատակը (ակնկալվող արդյունքը)

Աշակերտների մեջ ձևավորել համոզմունք, որ թեև տարբեր մասնագիտությունները պահանջում են տարբեր կարողություններ և որակներ, այնուամենայնիվ, կան որակներ և կարողություններ, որ կարևոր են բոլոր մասնագիտությունների և զբաղմունքների համար:

Կարողանան գնահատել սեփական կարողությունները և անձնային որակները, ինչը հիմք կհանդիսանա, որպեսզի հետագայում զարգացնեն այն հմտությունները և անձնային որակները որոնք իրենց պակասում են:

Ընթացքը Քայլ 1. Ուսուցչի առաջադրանքը ներակայացնելուց հետո (տնօրեն, բժիշկ, ճարտարագետ և այլն) աշակերտները թղթի վրա գրում են այն անձնային որակները և բնավորության գծերը, որոնք կուզենային տեսնել ընտրած մասնագիտության աշխատողի մեջ:

Քայլ 2. Աշակերտները շրջում են դասարանում՝ փնտրելով որևէ մեկին, որն ընտրել է նույն կամ նմանատիպ մասնագիտություն: Նրանք համեմատելով իրենց նշումները՝ փոխադարձ համաձայնությամբ կազմում են ընդհանուր ցուցակ: Զույգ չունեցողի հետ աշխատում է ուսուցիչը:

Քայլ 3. Բոլորի գրառումներից դուրս են գրվում այն որակները, որոնք նույնն են բոլոր մասնագիտությունների համար:

Քայլ 4. Ուսուցիչը գրատախտակին գրի է առնում խմբերի կողմից առաջադրված որակները, որոնք վերագրվում են մեծ թվով մասնագիտությունների: Վերջում 7 – 10 ամենակարևոր որակներ ընտրվում են աշակերտների կողմից, որոնք պարտադիր են բոլոր մասնագիտությունների համար: Ուսուցիչն առաջարկում է հարցնել դասավանդող ուսուցիչների և ընկերների կարծիքը իրենց ինքնագնահատականի մասին:

Խաղային վարժություն «Գնահատիր ինքդ քեզ»

Տարիքային խումբ 12 և բարձր

Տևողությունը 45 րոպե

Նպատակ – ակնկալվող արդյունքներ

Աշակերտները

- կիմանան աշխատողներին բնութագրող հատկանիշները,
- կփորձեն գնահատել իրենց և ուրիշների աշխատանքային կարողությունները,
- կզարգացնեն դպրոցականների տեղեկացվածությունը մասնագիտությունների մասին և մասնագիտական պահանջները:

Ընթացքը

Քայլ 1. Ներածություն

Ուսուցիչը խոսում է այն մասին, որ աշխատողը պետք է ունենա ոչ միայն գիտելիքներ, կարողություններ, այլ նաև հմտություններ, որոնք անհրաժեշտ են բոլոր մասնագիտությունների տեր մարդկանց: Գրատախտակին գրի է առնվում կարծիքներ այն մասին, թե «Ինչ աշխատանքային հմտություններ պետք է ունենա աշխատակիցը»:

Քայլ 2. Անհատական աշխատանք

Ուսուցիչը աշակերտներին բաժանում է «Լավ աշխատակցին բնորոշ կարողությունների ցանկ» -ի մեկական օրինակ, բացատրում՝ առաջարկելով գնահատել իրենց ներկայացրած աշխատանքային կարողությունները՝ ելնելով այդ ցանկից:

Բախշման նյութ

Լավ աշխատակցին բնորոշ կարողություններ

1. ինքնակազմակերպման կարողություն

- աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք,
- ինքնավստահություն,
- առաջադրանք կատարելու ընթացքում դրսևորած համառություն,
- ժամանակի խնայողություն,
- ինքնակատարելագործման ձգտում:

2.կոլեկտիվում աշխատելու կարողություն, այդ թվում՝

- մասնակցության ցանկություն,
- պատասխանատվություն՝ ընդհանուր աշխատանքի համար,
- ինքնուրույնություն և անհրաժեշտության դեպքում անհատական նախաձեռնություն ցուցաբերելու կարողություն,
- գործընկերների նկատմամբ բարյացակամ վերաբերմունք:

3. մտածելու և հիմնախնդիրները լուծելու կարողություն

- ստեղծագործական որոնումների և տրամաբանական դատողությունների կարողություն,
- նյութերը համակարգելու, տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդների կիրառման կարողություն,
- արդյունավետ որոշումներ ընտրելու կարողություն:

4. հաղորդակցման հմտություններ

- մտքերը գրավոր և բանավոր արտահայտել,
- վարել երկխոսություն, լսել զրուցակցին,
- լուծել կոնֆլիկտներ,
- հասկանալ ղեկավարի հրահանգները, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ բացատրություններ ստանալ աշխատանքի վերաբերյալ:

5. պլանավորելու կարողություն, որը ենթադրում է՝

- իրատեսական պլաններ կառուցել (նպատակներ, փուլեր, միջոցներ),
- որոնել և գտնել անհրաժեշտ տեղեկություններ՝ նպատակային մարտավարություններն իրականացնելու համար,
- գնահատել աշխատանքի արդյունավետությունը:

Քայլ 3. Զույգերով աշխատանք

Քննարկումներ լրացրած թերթիկների վերաբերյալ, ինքնագնահատականի վերաբերյալ կարծիքներ:

Քայլ 4. Ամփոփիչ քննարկում

Հարցեր.

1. Արդյոք դժվարացա՞ք գնահատել ինքներդ ձեզ որպես աշխատող: Մեկնաբանեք:
2. Ձեր ընկերների կարծիքը շա՞տ էր տարբերվում ձեր ինքնագնահատականից:
3. Ի՞նչ էք կարծում՝ ինչու՞:
4. Երբևէ փորձե՞լ էք որևէ մեկի համար բնութագիր գրել, եթե այո՝ ի՞նչ դժվարություններ էք ունեցել:

Նման առաջադրանքը կօգնի աշակերտներին ուշադրությունը կենտրոնացնել աշխատանքային որակների, հմտությունների ձևավորման անհրաժեշտության վրա, որը նաև կազդի կրթության արդյունավետ ընթացքի վրա, իսկ հետագայում՝ ճիշտ մասնագիտական ընտրություն կատարելու:

Մասնագիտական ընտրության նպատակով կարևոր դերակատարում ունեն նաև «ապագա մասնագիտության ընտրության» ակումբները, որոնք կոչված են ուղղորդելու և աջակցելու աշակերտներին մասնագիտական ճիշտ կողմնորոշում կայացնելու: Ակումբներն իրենց աշխատանքներն անց են կացնում շաբաթական մեկ ժամ, քննարկելով աշխարհում գոյություն ունեցող մասնագիտությունների, աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ հարցեր:

Ակումբների աշխատանքներում կարևորվում է մասնագիտական կողմնորոշման աջակցությունը որպես կրթության և դաստիարակության բաղադրիչ: Ակումբների աշխատանքներին մասնակցելով ոչ միայն տեղեկատվություն են ստանում մասնագիտությունների վերաբերյալ այլ նաև կողմնորոշվում ինչպիսի մասնագիտություն ընտրել: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է ուսումնական հաստատությունների ակումբներում համընդհանուր ներառում իրականացնել: Դա հնարավորություն կտա աշակերտներին խորացնել ինքնաճանաչումը, հստակ իմանալ իրենց ուժեղ և թույլ կողմերը, կարողությունները (ընդունակությունները), ցանկություններն ու հետաքրքրությունները: Այդ նպատակով անցկացվում են մասնագիտական ինքնորոշման վերաբերյալ հարցումներ, կիսաստանդարտացված հարցազրույցներ, թեստեր, զարգացնող խաղեր, վարժություններ, թրեյնինգներ:

Ակումբների աշխատանքներում անցկացվում են նաև.

- մասնագիտությունների վերաբերյալ վիկտորինաներ,
- «մասնագիտություններ» խորագրով վահանակներ և ցուցադրումներ,
- աշակերտների այցելություններ հիմնարկ-ձեռնարկություններ,
- հանդիպումներ տարբեր մասնագիտությունների անձանց հետ,
- խմբակների աշխատանքների կազմակերպում՝ ըստ նախասիրությունների,
- տարբեր մասնագիտությունների վերաբերյալ դիաֆիլմերի, ֆիլմերի դիտում, քննարկում,
- տեղեկատվական դասեր մասնագիտությունների վերաբերյալ (զրույց, բացատրություն, բանավեճ),
- արվեստի և տեխնիկայի շաբաթների կազմակերպում և այլն:

Դասավանդման կիրառելի մեթոդները

1. ԽԻԿ
2. Էվրիստիկ
3. Խմբային հետազոտություն
4. Վենի գծակարգ
5. Դասախոսություն
6. Պրիզմայի մեթոդ
7. Փոխներգործուն նշանների համակարգ և այլն:

Գլուխ 5
Հետազոտական աշխատանք

Մասնագիտական կողմնորոշման վիճակի վերլուծության աշխատանք եմ իրականացրել ք. Ճամբարակի №4 միջնակարգ դպրոցի սովորողների շրջանում:

Աշակերտների թիվը – 28

Կողմնորոշված են – 18 (64 տոկոս)

Դեռ մտածում են – 10 (36 տոկոս)

Եզրակացություն

Մասնագիտական կողմնորոշումը չափազանց կարևոր է այն առումով, որ հաճախ մասնագիտության ընտրությունը իրագործվում է առանց որոշակի դրդապատճառների, հետաքրքրությունների ու հակումների և սովորողի անհատականության, աշխատաշուկայի, հասարակական պահանջարկի հաշվառման: Աշակերտը շատ հաճախ չի պատկերացնում, թե ինչպիսի անձնային ունակություններ են պահանջվում այս կամ այն մասնագիտության մեջ իր առաջընթացն ապահովելու համար: Աղոտ պատկերացումներ ունենալով ընտրած մասնագիտության գործառույթների, առանձնահատկությունների մասին, հետագայում ապրում են ծանր հիասթափություններ, նույնիսկ ձախողվում են:

Հանրակրթական դպրոցներում հարկավոր է բոլոր առարկաների ուսուցիչների ներգրավվածությունը, որը նպատակ ունի աշակերտներին տալ ոչ միայն ակադեմիական գիտելիքներ, այլ հստակ տեղեկատվություններ տրամադրել դասավանդվող առարկայի և անմիջականորեն դրանից բխող մասնագիտությունների մասին:

Բոլոր առարկաներից անցկացվող վերապատրաստման դասընթացների ծրագրերում անհրաժեշտ է ներառել մասնագիտական կողմնորոշմանը վերաբերող հարցեր:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով տարվող աշխատանքներում պետք է ներգրավել ծնողներին՝ լուսաբանելով խնդրի կարևորությունը, համատեղ մշակելով արդյունավետ մոտեցումների իրատեսական ծրագրեր: Կատարվող աշխատանքները նպատակաուղղել ձեռք բերելու ծնողների ակտիվ աջակցությունը:

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված միջոցառումների համակարգ է, որն ուղղված է երիտասարդությանը մասնագիտության ընտրությանը պատրաստելուն՝ հաշվի

առնելով անձի առանձնահատկությունները և աշխատաշուկայի սոցիալ-տնտեսական յուրահատկություններն ու պահանջարկները: Մասնագիտության ընտրությունը ունի և անձնական և հասարակական նշանակություն, հետևաբար այն լուրջ, զգույշ և անհատական մոտեցում է պահանջում, քանի որ դեռահասը ոչ միայն մասնագիտության շնորհիվ պետք է ինքնահաստատվի, իր արժանի տեղը գտնի, այլև՝ կինտեգրվի հասարակության մեջ որպես քաղաքացի: Սա է 21-րդ դարի պահանջը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
2. «Մասնագիտական կողմնորոշման ձեռնարկ» 2014թ.
3. Մարդ և հասարակություն (ամսագիր) №7 2010թ. (էջ 10, 12)
4. Ընտանիք և դպրոց (ամսագիր) №4 2016թ. (էջ 11,12)
5. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում» (խաղային վարժություններ) Երևան 2012թ. (էջ 32,117)
6. «Տեխնոլոգիա» դասագիրք 7-րդ դասարան էջ (136-137)
7. «Հոգեբանական աշխատանքները ուսումնական հաստատություններում» (Ս.Սեդրակյան, Երևան 2016, էջ 61,63,66,)